

28

ԱՄՓՈԽՎԱԾ Է 1961 թ.


ԴԵԳ. ԿԵՐԵՐ.Ց

ԵՐԻ ՀԱԴՐԵՒԹԻՒՆ ՔՎՃԱՋՐՈՒՆ

ՅՈՐԴՆԵԱՑ

Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ԱԿՊԵՐԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ԱԽԽՏԵԱՆ



Ի ՎԵՐԱՎԵՐԿ

Ի ՎԵՆԱ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒՆ

1857

A 1
909

ՅԱ. ՈՒ. ԶԱ. Բ. Ա. Ե

կեանքն է ամմէն կենդանոյն առջի ուղածը . և ան սիրախ բլլայ բանական կենդանոյն առջի և վերջի ուղածը : Բայց կեանք որ կըսենք , կիմացուի ազէկ կեանք , ամմէն կողմանէ հանդիստ կեանք . որ ամմէնքս կը ժնտոենք , ու ոկտր է որ վընտենք :

Ուստի որչափ որ մենձ ու պատուական է մեկ ստեղծուածի մը կեանքը , այնչափ աւելի ցաւալի է անոր անհանդիստ բլլալը . իսկ կորսուիլը կամ կեանքը կորսնցընելը մահուամբ՝ է ծայրագոյն ցաւ , որ անկից մենձ շի կընար բլլալ : Բնական կեանք մը չունեցողները , այսինքն բոլորովին անշարժ ու անզգոյ արարածները փնտան նէ՝ ոչ իրենք ցաւ կիմանան , և ոչ արիշի ցաւ կուտան . թէ որ ցաւինք նէ անոնց

վրայ , մեր վրայ կը ցաւինք՝ անանկ պիտուական բանին մեզնէ պակսելուն . զոր օրինակ քարի , փայտի , ջրի , կրակի համար : Կենաց նշմարանք ունեցող բաները՝ որոնց կեանքը տնկական կը սուի , այսինքն բոյքը , թէ խոտ ըլլայ , թէ ծաղիկ , թէ ծառ , թէ պտուղ , քանի որ կրնան մենծնալ , հասուննալ , սրտերնիս կը կակը ծայ՝ ու մեզք կը սեպենք ձեռք դպցընել փրցընել զոր տեղը . չէ թէ անոնք ցաւ կիմանան (ինչպէս կը կարծէին ումանք անհաւատ և ազէտ մարդիկ) , հասրա որ զեռ չէ լըմնցեր այն փայելչութիւն տնկական կենաց՝ որ Աստուած տուեր է անոնց . և կանուխ փրցընելոց մեզի ալ անալիտան կը լլան : Զգայական կամ շնչաւոր կեանք ունեցողները , ինչպէս են ամենայն կենացանիք . մէկզմէկէ աւելի զգայուն , զոր օրինակ ծովու ժժմունքներ , ձկներ , հողի որդեր , զեռուններ , մրջիմներ , օղին մէջը եղած մեղուներ , ճանճեր , թիթեռներ , թռչուններ , հաւեր , աշխարհիքիս վրայ պէսպէս չորրոտանիներ , թէ ուստելու ըլլան և թէ շուտուելու , թէ ընտանի անսատներ՝ և թէ վայրի զազաններ , իրենք ալ ցաւ կիմանան , մեզի ալ ցաւ մը կուտան՝ երրոր ցաւ կը քաշեն , մա-

նաւանդ երրոր կը մեռնին , և աւելի ևս եր-
րոր շարշարանքով կը սպաննուին : Պատ-
ճառն է՝ որ բնական է ցաւ զգացողին՝ ցա-
ւակից ըլլալ ցաւ քաշողին . անզութ մարդն
է՝ որ արուն խմող զաղանի պէս բնաւ ցաւ
չիցուցըներ : Խսկ արդարն ողորմի անասնոյ
խրում , կըսէ զիրքը . միայն թէ անխել-
քութիւն է խղճալ աւելորդ ցաւով անբան
կենդանիներուն վրայ , կամ խղճել զանոնք
սպաննելու , երրոր մեզի պէտք են ուտե-
լու , կամ բանի մը ծառայեցընելու , կամ
երրոր մեզի վեաս մը կուտան . վասն զի
Աստուած զանոնք ըրեր է մեր պիտոցիցը
համար , շատն ալ մէյմէ կու կերակուր ըլլա-
լու համար : Գանք հիմա մարդուս վրայ՝ որ
բանական կենդանի է . և բանական ըլլալո-
վը՝ չէ թէ միայն ամմէն կենդանեաց վրայ
տէրութիւն թագաւորութիւն ունի , հապա-
լիր կենդանութիւնն ալ մէկ կերակ կեանք
չէ , ամմէն կերակ կեանք է՝ որ կընայ զր-
տուիլ երկրիս վրայ ու երկնքի վրայ : Բնա-
կան կեանք ունի անզգայիցմէ վեր , ունենա-
լով մարմին հողեղէն . տնկական կեանք
ունի բուսոց պէս , անելով ու մենծնուլով
մէկ որոշակ չափով մը . զգայական կեանք
ունի՝ զգայական և շնչաւոր կենդանեաց

պէտք առնենալով անոնց նման ծնունդ
և անգունգ՝ զօրծարանիք և զգայարանիք, ու-
տեղ խանել, սպառկիլ ելլալ, ապրիլ ու մեռ-
նիլ. և ամեմէն բանէն վեր՝ բանական կեանք
ունի՛ որով երկրային կենդանեաց կարգէն
զուրս կելլայ, ու երկնային կենդանեաց՝
այսինքն հրեշտակաց կարդը կը մտնայ. և
ասով կը լայ իր կեանքը այնչափ սպառուա-
կան, ազնիւ ու անզին, որ եթէ բոլոր
աշխարհը իր զարգարանքովը ժհանար,
ու ամեմէն բնական՝ տնկական և զգայական
կեանքերը կորսուէին մէկ մարդուն կեան-
քը միայն սպահելու համար, արժան էր՝ ու
մենծ բան չէր: Եւ առ կը սեմ մարդուս
մարմնաւոր կենացը համար. իսկ հոգեսոր
կեանքը՝ որ բոլորովին հրեշտակային է, և
զրեթէ ասուածային, մէկ բանի հետ չի
կը ունիր աշխարհիս վրա: Տես թէ որ-
շափ մենծ բան է եղեր բանական կենդան-
ւոյն կեանքը. և որշափ ցաւալի՛ անոր ցա-
ւը, մանաւանդ մահը:

Ասրանս աղէկի հասկընալու համար զիս-
ցիր որ մարդս բանական կը սուի իրեկ կեր-
պով, մէյմը՝ որ ունի բան ՚ի լեզափ, այս-
ինքն խօսք. մէյմ'ալ որ ունի բան ներտրա-
մաղրեալ, այսինքն բանականութիւն ՚ի

միտս , որ կըստի տրամաբանութիւն . և
մէյմ'ալ ունի բան հոգեղինութեան , այս-
ինքն հողի՝ մտօր և կամօր դարդարեալ .
ուստի բանական կըստի մարդու իրրե խօ-
սող , իրրե տրամաբան , և իրրե խմացա-
կան : Խօսիլը առաջ կուզայ տրամաբան
ըլլալէն . ան ալ խմացական ըլլալէն՝ ու
մարմնոյ հետ կապ ունենալէն : Բանական
կենդանի ըսելուր սովորաբար տրամաբան
կիմացուի . այսինքն անանկ բան հասկըցող
մտրովը , որ այն բանէն նոր բան մը կը
հանէ խելքովը , զոր օրինակ մուխ տեսնայ
նէ , անոր պատճառը կրակն ալ կը դտնայ
խելքովը . զարձեալ կը ճարտարէ լեզուովն
ալ խօսիլ ու միտքը հասկըցընել դիմացի-
նին , և որովհետեւ մտքին հետ բացարձակ
կամք ալ ունի , յօժարութիւնը մէկ բանի
մը կապուած չէ , հապա ամմէն ճանչցած
բանէն ուղածը կընտրէ , չուզածը մէկդի
կը ձղէ անձնիշխան աղատութեամբ :

Ասով կը հասկընաս մարդուս կատարե-
լութիւնը , թէ որչափ իրմէն վար կը մնան
անբան կենդանիք , որ ոչ միտք ունին բան
մը հասկընալու , ոչ խելք ունին անկից
բան մը հանելու , ոչ լեզու ունին հասկը-
ցածնին հասկըցընելու , և ոչ կամք ունին՝

տեղայն կեօրէ աս բանս ուզելու կամ չու-
ղելու . հապա մէկ կերպ մը ուզելիք կամ
չուզելիք մը ունին բնական յօժարութենով ,
և աննշան ձայնով մը մի և նոյն բանը կը
հասկըցընեն . անկից դուրս չեն կրնար եւ-
լալ ։

Տրամարան ըլլալը խմացական ըլլալէն
կուզայ ըսի . վասն զի մարդս սոսկ մարմին
չէ շնչառ , հապա ունի անմահ հողին 'ի
սկատկեր Աստուծոյ ստեղծած . մարմինն 'ի
մարմնոյ կըլլայ , այսինքն 'ի ծնողաց , իսկ
հողին 'ի հոգւոյն , այսինքն յԱստուծոյ նո-
րանց կը ստեղծուին 'նման հրեշտակի , մա-
նաւանգ թէ նման Աստուծոյ՝ գոյացութիւն
հողեղէն՝ մտօր և կամօր : Եւ այս կատարե-
լութիւնս խմացական՝ անմահական և աս-
տուածական՝ պիտի երենայ աւելի անդիի
աշխարքք . ուր ուզենայ նէ՝ տրամարանելով
բանէ բան կը հանէ , և ինչ լեզու որ ուզէ՝
էնաղէկը իր քովէն կը ստեղծէ ու կը խօսի .
բայց կարօտ չէ աս կերպս միշտ բանեցընե-
լու . հապա Աստուծմէ տուած լուսով ամ-
մէն բանը մէկէնիմէկ կընայ հասկընալ , և
առանց խօսելու՝ միտքը ուրիշի կընայ հաս-
կըցընել , (որ կըսուի լեզու հրեշտակաց) .
իսկ կամբն կատարեալ կըլլայ ամմէն իր

ուղածովք, որ ալ բան չի մնար ուղելու .
վասն դի զԱստուած տեսնալով անով կը
դմայլի անհնապէս . և այնու աստուածա-
տեսութեամբ կըլլայ աստուածանման բան
մը՝ անմահ կենօք յաւիտեան¹ : Հիմա ինչ
կըսես, ասանկ կեանք մը ունենալը ինչ
կարժէ, ինչ չարժէր . ասկից մենծ բան
կրնայ մի ըլլալ . ասոր ներհակ՝ որչափ ցա-
ւալի է ասանկ կեանքը կորսնցնել, ասանկ
կեանքը վճացընել, ասանկ կեանքը յաւի-
տենական՝ յաւիտենական մահուան հետ
փոխել, ինչպէս որ կը փոխեն ամենայն մե-
ղաւորը, որ Աստուծմէ ետ կենալով մահու-
չափ մեղք՝ իրենց հոգին կը մեռցընեն .
Թող դանոնք որ ներելի մեղքով իրենց հո-
գին կը հիւանդացընեն, ու մենծ բան չեն
սեպեր, ինչու որ խասպար չեն՝ թէ որչափ
մենծ բան է հոգւոյն կեանքը, առողջ կեան-
քը, հանգիստ կեանքը, և այն՝ յաւիտեան :

Աս ողորմելի և ողբալի վիճակը տեսնա-
լով մարդկանց վրայ՝ քարոզութեանս օրերը,
և շատ կերպով ճար մը՝ դեղ մը մտմտալով

¹ Ասոր վրայ դեղեցիկ դրերէ մեր Հայք Յակոբ
վարդապետը Ստեփանեան ՏԵՐԵՅՆ ՇԵՄԵՐԴԻ . մենք
ալ ուրիշ ոճով խօսեցանք ի Դ.Ի.Խ.Հ.Վ.Ն.Պ.Ե. ԵՐԵՒ-
ԱԿԱՆ յաղագս աղբայութեան :

Աստուծոյ տուն տուածէն , ձեռք զարկի
աս պղտիկ զիրքս հանելու , ամմէն մարդու
առջեր դնելով ընտանի խօսքերով թէ քա-
նի կերպով կրնայ մարդուս հողին հիւան-
դանալ ու մեռնիլ , որ անկից ետք քաշուին-
և քանի կերպով զեզ կրնայ ըլլալ մեր հո-
գոյն ողջութեանը և առողջութեանը : Ո՞էկ խօսքով , կը զանառ , ով մեզաւոր եղբայր
իմ և որդի , աս զրբիս մէջ զեզ կենաց՝ ժա-
րատիչ ցաւոց և մահու հոգւոյդ : Տէրինքնին
տացէ ինձ նախ առնել , և ապա տսոցա-
նել և ձեզ ընթերցողացդ և լսողացդ առնուլ
և առնել առողջարար յանձինս զայս զեզ
կենաց՝ ի կեանսն յափառնականս :

Այլ ևս աստանօր զսակաւամասնեայ
երկս նուաստացելոյս՝ ի կարգի որդեզրաց
սրբոյ կուսին , ում այլ ումեք , քայց քեզ
միայնոյ մօր և կուսի , Տիրամայր մօրն Եղայի
թժիւկ . զեզ կենաց ստուդալէս ստորողնալ
՝ ի սրբոց վարդասպետաց , նոյն և ծառ կե-
նաց . տունեկ տեմանորեան , միանզամայն և
արմատ տեկոյն տեմանորեան , նոտիրեմ՝ ի
բոլոր սրտէ՝ ընդ նուիրանաց սրդեզրու-
թեան բարեալաշտ ծառայիքո՞քանիցս վա-
ժագողի . զի ընկալցիս քեզ՝ ի հանոյս , և
արդիւնացուցես զուխտ սրտից մերոց՝ ի
ժառու Որդոյ քո միածնի :

Եւ զու տեր իմառեր , լուր բանիւ հոգե-
կիր հսկողի՝ դոչման յետնելոյս . « Եւ արա-
ցես զոյն ընթերցողացն ՚ի սիրտ յատակն՝
բժիշտիւն հոգոց , և մարրորիւն յանցանոց .
բողոքիւն պարտոց . և արձակուրդ մեղոց
կապանոց . . . Եւ արացես յիմել գեղ կենաց՝
առ ճնարս ցատոց հոգոց (և մարմելոց) բոց
ստեղծուածոց . . . Զակուեալո իմ զու կատարեալ .
եղիցի հոգի բո խառնեալ ՚ի առ » . « Եւ արեւի - Պ :

W

ԳԵՂԱ ԿԵՆԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

Առաջին ողբարին մարդոյն . եարի ցար . և
զեզր . այսինքն են երեք պիհակը՝ անմեղ թե-
րեսն , անկիւտ թեռերեսն , և նորոցեալ թե-
րեսն |

" Առաւած զման ոչ արար , և ոչ խնօսոյ ընդ
" կորուստ կենդանեաց . քանզի հաստատեաց 'ի
" մնել զամենայն , և 'ի փրկութիւն են գործք ոչ
" խարհն . չիր 'ի նուսա զեզ սաստակման , և ոչ թա .
" զաւորութիւն գմտիաց 'ի ներբոյ երենից . (կամ
" 'ի մերայ երկրի) . զի արդարութիւն անման է .
" իսկ ամսաբիշոյ ձեռար և բանիւր կոչեցին զնու
" (այսինքն զման) ուն խրեանն Զի Առ
" տաւած հաստատեաց զմարդն յանեզծութեան .
" և 'ի պատկեր իւրոյ բարերարութեանն արար
" զնու : Կախանձու բանաբրկութիւնն ամոն , յաշ
" խարհն . և վորուեն զնու' որ նորա պիհակին ուն
" կի են | :

Ա . Մարդն որ սուզծուեցաւ , երկու բան ու .

ներ . մշտիք՝ բնական տուրք , մշտմալ դերբնական շնորհը : Բնական տուրքն էր՝ իր բնութիւնն . որ է բնական կենդանիի ըլլալ՝ ունելով մարտին նիւթական , և հոգի աննիւթ խնացական . որոնչելի միարանութեամբ իրարու հետ կապուած՝ որևս պիտի զարդարանքով : Արդ ինչպէս մարտինը շաղուած ըլլալով չորս բանեն , և 'ի զցալի տարերց քառից , հակառակաց միարանից , , , ոյսինքն են հոգ , չուր , ոդ , հուր . ինքիրմէ կրծար բնականա բար տպականիլ , և քակուիլ 'ի նոյն չօրս նիւթու որոնցով եզեր է . առար ներհանկ՝ հոգին աննիւթա կուն և խնացական՝ չունենալով իրեն ոպատճառ մէ քակուելու . որովհեամ բոշոր մըն էր անքատանե լի , առանց մասանց՝ որ կարենայ ի նոյն մասունք քայլայիլ . իրեն քակուիլը ուրիշ կերպ չէր կրծար ըլլալ . բայց եթէ՝ ոչինչ զառնալով , և բոլորն ըս ըսրովին փնանալով . և սուկայն Վասուած որ իր ըրած բանը չի փնացրեւը , ուստի բնականաւրար պիտի էր որ բնական հոգին ըլլայ միշտ անեղջ և անման : Աւրեմն մեյքը առ մարտվա կիմացուի ոյն բանն պրոց . և Վասուած հաստատեաց զմարդ յանեղջ ութեան , , , ոյսինքն տուաւ մարդուն հո գի անեման : Այս է փիլիսոփայական մեկնաւթիւնն Աշմարիս ըստ ինքեան . միայն թէ առ անոց բառու Մոշէ կիմացուի փոխանակ զմարդու մասին մարդոյ , որ է հոգին :

Ի . Խակ գերբնական շնորհն՝ ոյն էր , որ Վասուած զմարդը առ աշխարհիս համար միայն ըստ անդեց՝ որ անցաւոր կեանիք մըն է , հասպառազեց որ

երկնացքին վասաց ալ հասնի , և յաս յանձնական
կեանոր վայըէ . ասոր համար հեմ մարմնոյն հեմ
հոգւոյն մեյմեկ գերազանց միրք տռւաւ դրախտին
մէջ , այսինքն գերբնական անմահութիւն մահկա-
նացու մարմնոյ , և գերբնական անմահութիւն ան-
մահական հոգւոյ : Եշ այս և բռւն աստաւածա-
րանական մեկնութիւն այն բնարանին , “ Աս-
տաւած հաստատեաց զմարդն յանեղծութեան ” .
որ և և Հըմարատութիւն հաւասար . այսինքն թէ
Սատուած զբոլոր մարդն անեղծ և անմահ մալու
համար տանեղծեց . անանկ որ մարմինը առանց հի-
ւանդութիւն և յառ բաշելու ապրի տանեն մը առ աշ-
խարհիս մէջ վայըէլով Սատուածոյ տռւած մարմ-
նաւոր բարիբը , և եազը կենդանի կենդանի եր-
կինըը համբառնայ , ու յաւիտեան վայէլէ Սատու-
ածոյ հետ հոգեանոր բարիբը :

Աս բանս որպէս զի կարենայ ըլլալ , հոգւոյն
ալ տռւաւ (բայ ՚ի ֆիզիգական և ՚ի բնական ան-
մահութեան) գերբնական և բարոյական անմա-
հութիւն մ՝ ալ , այսինքն բնութենի վեր կատարե-
լութիւն մը՝ որ չնորհը կըսուի . որ է անանկ սըր-
բարար պարզէ մը ներբին՝ որ անով Սատուածոյ
հանգական ըլլայ , և աստաւածահանոյ գործքեր
ընելով՝ որժանի ըլլայ իրրե իր աշխատանքովը
վասարկած վարձրի տեղ տփ ձգել երկնից ալլայու-
թիւնը : Եշ այս երկու որանչելի գերբնական բա-
ները՝ այսինքն անմահութիւն մարմնոյ ֆիզիգա-
կան , և անմահութիւն հոգւոյ բարոյական , ա-
նանկ կապուած էին իրաբու . հետ անբաժանելի

որ ինչպէս հոգին բաժնուի նէ՝ մարմինը մեռած
լէշ մը կը մնայ, ասանել ալ հոգւոյն բարոյական
անմահութիւնը մէկդի երթալին ետև՝ մարմինը
թիզիգական անմահութիւնն ալ պէտք էր որ վեր
նար, ու բոլոր մարդը մաներ, ինչպէս որ եղաւ:

Դ. Առ էր ան գաշինքը որ Շատուած առաջոց
դրաւ մարդուն հետ՝ այսինքն Շատուած և Եւայի կ/
դրախտին. պատուիրանիրս որ չե պահէր նէ՝ ըստ,
նոյն օրը մահու մեռանիցիք. ոտեկ մէռանիցիւ քը-
ուեր. հասպա՛ բահաւ մէռանիցիւ 1, այսինքն հոգւով
և մարմինվ մեռնիք. մարմինը՝ որ հող էր, հող
գառնայ. հոգին՝ որ պիճանալ չունի, իմ երեսէ
ինկնայ. այսինքն զրկուի յաստուածային շնորհաց,
և ՚ի պարզեաց հոգւոյն սրբոյ. ինչպէս որ ջրհե-
ղեցին առենն ալ ըստց. և Մի մնացէ ոգի իմ ՚ի
մարդկանդ յայդմիկ՝ յախուեան, վասն լինելոց
դոցա մարմինը 2,,:

Սառնիք հերիք չեն. առ երկու կերպ մահուանս
հետ՝ իրենց պատճառաներն ալ դուրս ելուն՝ իրեն
կարսապետը մահու և առաջնորդք կարսաւան,
բիւրակերաց թոյնիք մահարեցք կամ գալանիք պա-
տառուցք. այսինքն պէտպէս հիւանդութիւնիք մարմ-
ինյ, և պէտպէս հիւանդութիւնիք հոգւոյ. որ ան
մեղ բնութեան պիճակին մէջ հիւ մէկը ցիկար:

Զոր որինակ, զբան ցաւ ցիկար, ինչըի ցաւ
ալ ցիկար. և ոչ հոգեոր և ոչ մարմինոր ինչը.

1 Ծնկ. Բ. 17:

2 Ծնկ. Զ. 3:

դարտութիւն դլիսու պառատ շիկար . մաքի տառա-
նում ալ շիկար , երեսի ծուռումուռութիւն կամ
անշնորհքութիւն շիկար . միոցն ալ խենթուխելառ
բաներու . եռեւէ չեր երթար . երեակայութիւնն
ալ անշնորհք և այլանդակ բաներով չեր խաղար :

Աչքի ցաւ շիկար , աչքի ցանկութիւն ալ շի-
կար . աչքով մեզք մը չեր ըլլար . հոգւոյն աչքն
ալ չեր կուրնար , ամենն բանը յառակ ու շիտակ
կը տեսնար . ըրածը կը դիմնար , ուրիշներուն ը-
րածին շարաչար գատառոր չեր ըլլար :

Անկընի ցաւ շիկար , անհետպանդութիւն բանի
որ շիկար . անկանդգրութեան աղէկը կար , գեշը
շիկար :

Բերնի , ակռայի , լեզուի , պալազի ցաւեր շի-
կար . բերանն ալ մեկ մեզք մը դուրս չեր հաներ .
ակռան ուրիշին անունը բամբասանքով չեր խած-
իրդեր . լեզուն անվայիւ խոր մը չեր խռուր .
պազազը՝ իր շափեն եւեւ բան խապուլ չեր ըներ ,
ոչ կեր ոչ խռմ : Հառա շափառոր և կամառոր
հաշակ մը կառներ՝ երրոր ուղեր՝ Աստուծոյ տեղ-
ծած բարիքներէն ու պատռական ջրերէն . չու-
զենար նէ՝ նեղութիւն չեր քաշեր , ոչ անօժու-
թիւնն և ոչ ծարաւ . հերիք էր որ տաեն տաեն՝ ի
ծառոյն կենաց համառա մը ըներ իրրե նախառա-
հող դեղ կենաց և բանզէ հիր անմահութեան :
Խակ մարգուս անխելքութիւնը ան եղաւ որ զեւոց
արդիլած ծառէն կերաւ , որ էր մահագեղ : Ա-
ռաջ զիտութիւն բարեոյ ուներ , զիտութիւն շա-
րի շուներ . եաքը ուտեառի իւժառոյն զիտու-

թեան բարեոյ և շարի , բարին մնացաւ , չարը ար վեցաւ , որով ամսմնն շարիք մեկենիմեկ զլուխը թա փեցան բառ հագույց և բառ մարմինյ . և Յասից մի չե ցուլուխ չիր ՚ի նմա առաջութիւնն ։

Դ . Այժմ սարին որ ցաւը ինչ էր չիր պիտեր զետ ՚ի արդիլան ծառը քալելով արժանի եղաւ որ եարը փշերու քայ քայէ ու խացուխ . և զլուխն Ազամը իր սարին , այսինքն Եւայի , խանարէելով անանեկ առակնուզբայ ըրաւ . զինքն ալ զբուռը աւ խարհն ալ , որ ուրիշ հար շիկոր շանկելու , բայց Եթէ զլուխն մեր Վասուան զայ խանարհն յիրէ . նից իրեն սախց , այսինքն մեզի , ու կանցնե մը ընկած բնութիւնը , զլուխը փշէ սպասկ ալ առ նելով :

Այժմ ձեռքն որ՝ աշխատանիք ինչ ըսել էր չիր պիտեր , հասպա զբասանիքի մը համար զբասանիք պախանան պէտ պիտիք ըներ , երկըննուզավ զետ ՚ի պառազն արդելեալ ծառոյն , թէ ինքը պատեհ . ցաւ՝ որ բոլոր կեռոնքը աշխատանիքով անցընե , ու քրտամիք երեսաց հաց ուստի՝ իր զաւկըներովք , և թէ իր աերը իրեն համար խաչին վրայ ձեռը սա քը տարածէ ու զամանի . ։ Յարածեալ ձեռք ընդ ձեռաց , սաք ընդ սախց ընթամազեաց ։ , և այն .

Այժմ կոզն՝ որ կենց անութեան ազքիւր ընտ . լով , և սպահարան որախ՝ որ կենցաց արմասանէ , հրա շայի կերպով զիրեն նմանուր ծներ էր՝ ոչ իրիք զաւսկ , այլ իրրե ընեկեր սպահական բնիքեան , այսինքն զէշասյ՝ զմայըն ամենայն կենց անեաց , անմաս .

Տառը թեամբ և անհազութեամբ հետեւելով իր ըն-
կերոջը կամքին՝ կերպու որդիելով պատզու, չե-
թե խարսելով Եւայի ուես՝ թէ Վասունոյ նման
կը լոյց . ոչի յազմուելով ՚ի բժանեան սիրոյ նո-
րու, անոր խամբը են շանցնի ուեյի՝ Վասունոյ խա-
մբը են անցու, ու պատճառ եղաւ որ հեմ Եւայ՝
հեմ ամենին գառերը նորս ցաւով ու որումն թէ ամբ
զաւակ թերեն, և ամենայի որդիք մարդ կան ամենին
կերպ ցաւ քաշեն ՚ի պատի և ՚ի փորի . որոնց գեղ
ընելու շեն հասնիր ամենայի բժշկաբանը . ևս ա-
ռաւել հայեր ցաւեր ու հիւանդութիւններ քա-
շեն ներսեն, զար շեն կրնար բժշկել ամենայի բա-
րոյականը : Մի միայն գեղ կը մասր որ որդին Վա-
տուծոյ՝ որ եղե որդի մարդոց ՚ի գառերեն Եւայի
յանաբառ կուսեն Մարիամույ, խաչին ծառին մը-
րայ ելլայ, ու հան ուեզու իր կողը բացուի . ու բան
արիւն և ջուր . որիւնումը բաւե զեկու աշխարհի,
և ըստի մարե զեկուց հուրը՝ որ ելաւ ՚ի կողեն
Ազամույ :

Ա : Յահա Բնէ ըստմ, Բնէսպէս հասկը ցընեմ հո-
գեսր և մարմառու ցաւերը՝ որ պատճառ եցաւ ՚ի
մեկոցն Ազամույ . և որով մեռար որդարու-
թեամբ, և ՚ի պիճուկի անմենի բնութեան սկզբնա-
կան արդարութեան բնեկանը ՚ի պիճուկ առաջա-
նեալ բնութեան, որուն ուրիշ հոր ցիկար, բայց
միայն որ գար մի միայն գեղ կենաց կենարարն մեր
Յիսուս Քրիստոս . վասն որոյ կըսէ շաբական .
Որ զանազան միբար մեկոց հարսր յազիս ՚ի Բըշ-
նամույն, և ՚ի բազմապատիկ հիւանդութիւնն կա-

բօտացաք մարդասիրիդ բառնալոյ զցաւս մեր,
վասն որոյ բժշկեաւ զմեղ Քրիստոս որպէս մարդա-
սէր ։ ։ ։

Այս երկնաւոր գեղս՝ նոյն և բժիշկ, սորվեցոց
մեջի բանիւ և օրինակաւ, թէ որ ցաւին որ գեղ
շահ կընէ - որ բանէն զցոյշ պիտոր կենանք՝ առ
քի վեհարիզ պիտի բանենք, և որ բանը պիտի բա-
նեցընենք՝ որ վրայ դանք, մէրմ, աւ շիհիւանդա-
նանք. ինչպէս որ Երսունըսութ տարի հիւան-
դացողին՝ որ ըռնացուց հոգւով և մարմնավ, ա-
պատուերըս դրաւ. « Ահաւագիկ ողջացար, մի-
ւս մեզանցեր, զի մի չար ևս ինչ լինիցի քեզ! ».

Հապա մենք աւ Քրիստոսի մեջի սորվեցոցած
գեղերը ամմէն մէկ ցաւի գեմ սկսինք առաջ թէ-
րեւ ու բանեցընեւ իր շնորհըովը :

ԳԼՈՒԽ Բ

Դեղ սկզբնական մեղաց, որ և մկրտութիւն:

Ա. Բավանդակ մարդկային թնութիւնն՝ մահա-
ցու հիւանդութեան մէջ ընկաւ. Ադամայ մեզը
վէ, որ կրտուի սկզբնական, անանեկ կապչուն ցաւ.
և անանեկ չարաշար ու մէկնիմէկ սպանեազ հա-
ստրակաց, որ անոր նման ժանառամահ չի կրնար
ըլլալ, որ ամմէն մարդ մէկն պլր շոկեց, ու զամէն
մարդ գեռ չի ծնած, սպաննեց :

Կառր ուրիշ գեղ չէր կրնար ըլլար, բայց մայի

քայլն Երկնաւոր բժիշկն՝ որ և է բռն գեղ կենաց ,
այն՝ որ միայն բացարձակ կրնայ ըսել ։ « Ես հար-
կանեմ , և Ես բժշկեմ , Ես սպանանեմ , և ես կե-
ցուցանեմ , : Առաջի աւանալով մեր ողորմելութիւ-
նը՝ ողորմեցաւ ու Եկաւ մեղ բժշկել և կենդանա-
ցնել , ըստ այնմ . և Աչ ինչ է ալիսայ բժիշյ ող-
ջոց . այլ հիւանդաց . և ոչ Եկի կոչել զարդարս .
ոյլ զմեզաւորս ¹ , , . և Ես Եկի՝ զի զկեանս ունի-
ցին . և առաւել հս ունիցին ² , , . այսինքն առա-
ւել քան զառաջին կենդանութիւնն՝ զոր ունիցին
յանմեղ վիճակի դրախափն : Եւ ինչպէս որ սկզբ-
րնական մեղաց մահացու հիւանդութիւնը հասա-
րակաց Եր , նմանապէս կենարար գեղն աշ հասա-
րակաց արաւեցաւ , ըստ այնմ և Որպէս Ագամու ա-
մեներին մեռանին , նոյնպէս և Քրիստոսի ամե-
ներան կենդանացին ³ , :

Բայց թէ ինչպէս կրլսայ որ ամենիրը չ'ն կեն-
դանանար , այսինքն շատն աշ կը մեռնին նոյն սկզբ-
րնական մեղքավ . սկզբան խորանեկ պատճառներ
կան՝ որ ասաւուած արանները ճօրով կրնան հասկը-
նալ . թուզ թէ հասկըցնել . քեզի հերիք ըլլայ աս
երկու գիւրին պատճառը .

Աւշմը որ ինչպէս մարմաւոր կենաց ընդհան-
րական գեղը թէսլէտ դիւրաւ գանուի նէ ամենն
աեղ , ձրի աշ ըլլայ առանց սարկի , այսու ամենայ-
նիւ կրլսայ հիւանդ որ այն գեղը կամ ցիգանար .

1 Աւաշի Բ . 17 :

2 Յաշն . Ֆ . 10 :

3 Ա . Կայնի . ՖՆ . 22 :

կամ չառներ, ու կը մեռի պէսպէս պատճառներով, զորօրինակ մէկը պուտ մը ջռւր առնուր սր զազը կը բացուէր, չեն առւեր կամ չէ առեր նէ, պազազը գոցուեր ու խզդուեր է . մէկայք հոսած աեղ մը գոցուած նստելով մեռեր է . ոգը փոխեր նէ, չէր մեռներ . մէկայք իր մարդիկներուն անհոգութենէն երեսի վրայ մնացած կը մեռի և այլն . ասոր նման ալ հոգեոր հիւանդութեամ մէջ կը լըսայ :

Մէրմ' ալ որ ինչպէս սկզբնական մէջքը մեր ամենուն առջի ծնողացմէ մեզի կանցնի՝ միջնորդութեամբ մեր առանձնական ծնողաց . ըստ այնու և Անօրէնութեամբ յզացաւ, և 'ի մեզս ծնու զիս մայր իմ¹, , անոր գեղն ալ մեր ամենն մէկին ծնողաց ձեռքովք ճարուելու ճամբան դրած է Առտուծմէ : Հին օրինաց մէջ՝ ծնողքն որ հաւատացեալ ըլլային նէ, անոնց հաւատքովք զաւկըներն ալ եկեղեցնաց մէջ կը սեպուեին . և ասոր նշանը յայտնի ըլլալու համար՝ Ըստուած հրամայեց որ աստուածապաշտ ողդն Արրտհամու իրենց մանչ զաւակները թլփառեն . որ թէպէտ ըստ ինքեան սկզբնական մէջքը չէր ջնջեր, բայց յայտնի կը նէր՝ թէ այդ նշանը ունեցողք զատուած է հեթանոսներէն, ու Ըստուծոյ ժողովուրդն է . և Առտուծոյ ժողովուրդ ըլլալովք՝ իր հաւատքը շիտակ կը լըսար, և իր հոգին ալ փրկութեան ճամբուն մէջ կը գտաւեր . ասոր համար կոչի յԱռաքելոյն նշանէ և կնիք արդարութեան հաւատաց²:

1 Առշ. Խ. 7 :

2 Հառմ. Կ. 11 :

Վար ներհակ անհաւասի զաւակը՝ իր ծնողաց
պէս անհաւատ մնալէն՝ սկզբնական մեղաց գեղէն
ալ զուրկ էր . և քանի որ իւրեւը չէր բացուած ,
կարելի չէր որ հաւատացեալ ըլլայ անհաւասին
զաւակը :

Ե . Գ. անդ հիմա նոր օրէնքն՝ որ Քրիստոս աւրեւ
մեր ամմէն կերպով դիւրին դեղ դրաւ սկզբնա-
կան մեղաց զաւրբ մկրտութիւնը . և սակայն
ծնողքն որ անհոգ ըլլան երեխան մկրտել տալու-
նէ . ի հարկէ անկնունք կը մնայ . և յանկարծ մեռ-
նի նէ , սկզբնական մեղաց տակը կը մնայ : Թող որ
ծնողքը անհաւատ էն նէ , ինչպէս իրենք անկնունք
կը կորսուին , տասնկ ալ իրենց զաւակը անկնունք
կը կորսնցընեն :

Սոնք յայտնի էն սուրբ աւետարանէն , ուր
կըսէ Բնիքը Փրկիչն մեր . և Եթէ ոչ ոք ծնյի ի ջրոյ
և ի հոգւոյ . ոչ կարէ մտանել յարբայաւթիւնն
Աստուծոյ ¹ , : Որ հաւատայ և մկրտեսցի կեցցէ .
և ոչ հաւատայ . զատապարտեսցի ² , : Ասկից
հասկըցիր թէ որշափ ծանր պատժոյ արժանի են
այն ծնողք կոմ կնքահարք . որ երախային մկրտու-
թեան ազէկ հոգ չեն տանիր . կամ կուշացընեն
ատենը՝ աշխարհային հանդէս ընելու համար .
կամ աւետան որ երեխան մեռնելու վրայ է . փոյթ
չեն տանիր չուտով մկրտել տալու՝ որ Տամրով որ
կարելի է : Շամբան ալ աս է . որ շուտով քահա-
նայ մը կանչեն՝ որ մկրտէ . քահանայ չի կայ նէ .

1 Յ-Հ . 4 . 5 :

2 Մ-Շ . 32 . 16 :

Երիկ մարդ մը՝ ով որ ըլլոյ, մարդ չի գտնի նէ, զայելին է եզեր՝ կամ ուրիշ հարսար կնիկ մը, ըստ զիտաւորութեան մօր մերոյ սուրբ եկեղեցւոյ պէտք է որ մերսէ յանուն Հոր և Որդւոյ և Հռ. զւոյն սրբոյ. չէ նէ՝ Խառնած անոր հոգին իր ծնողացն կուզէ: Առափ դարձեալ կըսեմ, երբոր մէկ երեխայ մը դժար ծներ է, ու վասնի ունի մահուան, 'ի հարեւ նոյն տաւն պէտք է որ մեր տուի. անկից ետեւ թէ որ մեռնի նէ, արբայր թէան զաւակ է. որովհետեւ ծնաւ. 'ի ջրոյ և 'ի հո զւոյ - ապա թէ չմեռնի նէ, պէտք է ժամ տանիլ, ու մեացած արարագութիւնները կատարելով՝ տուանց մերսելու.՝ սուկ սուրբ մեռները տալ: Առ ալ զիտացած ըլլան մարերը՝ որ Խառնածոյ դժար պատասխան պիտօր տան, երբոր իրենց անհոգու, թէնումը կամ անխելքութենուցը պատճառ կըլլան որ զաւակնին հասըլ չըլլար, ու մերսութեան չի համենիր նէ: Մէկ խորով, հասկընալ պէտք է տորան: չէ նէ՝ շատ բան կար ըսելու, թող քետ միջները խրատեն Հահիլները, և Հահիլները խրատանեն քետմիջներէն:

* . Կրեայ հարցընել մէկը նախ. Անկենանք մեռ նոզ երեխաներուն հոգիները ուր կերպան, ի՞նչ կըլլան:

Պ-Պ-Ա-Խ-Ա-Ն-Ի- . Խառը վասյ՝ ազետները մէյմեկու պէտպէս ազիտական պատասխան կուանան: և գնախառ դայի կներ ալ կան, որ ցաւազին մարերու միմիջարանը տալու համար՝ իրենց քովին բաներ կը ստեղծեն կը խասին: բայց ով որ Համար.

առաջինը կուզե սորմիլ նե , ուս է որ առևիճ ուն
կնունք երեխայ զուրկ կը մնայ յարրայութիւն .
այս է Համբառաւթիւն հաւատայ . բայ այնմ . ¹¹ Ե
թէ ոչ որ ծնցի ՚ե ցրոյ և ՚ի հոգւոյ , ոչ կարէ մը
տանիւ յարրայութիւնն Առաւելոյ ¹² . Առջից
զուրկ մնայ նե , ուրեմն գժոխը կերպմայ պիտի
բաւս : Չե : Համբա բայ հասարակ խափոց ամենայն
վարդապետաց , և բայ սովորական վարդապետա
թէ ան կամթազեկէ եկեղեցւոյ պիտի բանիք , թէ
զատառարակելոց գժոխը շերթմար , նաև հապետաց
գժոխը կերթայ՝ այսինքն լինալուր . ուր կայ ուս
աիժ պղկանն կամ լինասա , բայց ցիկայ պրախ
զգայութէ ան կամ կրտկի : Առանկ կը խառնն հա
սարակարեն հարր և տառուածարանք . առելի բան
պետքը չէ , ոչ հարցընել . և ոչ պատասխանել . չէ
նե , կը սիստիս . Առաւելոյ գատառատինին խորը
մանաս նե , կը նկզմիս :

Դ . Համբա , բայ մեկը , շախահատ մարդ մը ու
զենայ քրիստոնե ըլլալ . ու ցիզառի զինքը մեր
տակ նե , Բնէլ ընէ :

Պատախանի . Եթ կողմանին պիտի ջանայ՝ որ կա
րելի է նե՝ մեկ մարդ մը զանե զինքը մերապ .
ինչ մարդ կուզե՝ թող ըլլայ . պիտի ազաշի զանի
որ առնու զինքը ջաւը խօնէ , կամ զլուխը ջաւը
լեցընէ՝ ըսելով առ խօսք իր նիկթին . (որ է զի
առարտութիւն սուրբ եկեղեցւոյ) . ¹¹ Մկրտի ծա
ռայս քրիստոնի այս անուն՝ (կամ , ևս մերակմ
շքեղ) յանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ .

ամեն „ : Միայն թէ ջուրը ըստոյ համարիտ և բնակած ջուր . ինչպես է գեղաք , ազդիւրք , անձրիք ջուրք , ծովին ջուրք . չէ թէ խոսերեն կամ ծաղկըներեն շինած արաւետական ռուհ մը , կամ ցրի պէս բան մը , կամ թաց բան մը : Բայց թէ բնամէկ մարդ մը շիկարենայ զանալ լեռան զլուխը կամ ետպանի ռեզ մը , կամ թէ զանծ մարդը շուզէ զանի մկրտել , և ինչքն կենացնէ վախ ռւնի , որ պիտի մեռնի կամ բնական կամ բռնական մահուանի : զոր որինակ պատերազմ պիտօր մանայ , կամ մարտիրոս պիտի ըլլայ . ան տանն մկրտութեան ջրոյ ռեզը երկու կերպ հացեար կնունք կրնայ ըլլալ . մէկն է մկրտութիւն սիրոյ , մէկայց մկրտութիւն սրոյ : Մկրտութիւն սիրոյ՝ որ և հըրոյ կրտուի , և սասափէ վափաք սիրոյն Աստուծոյ՝ որով մէկը կուզէ մկրտուիլ . բայց իր ձառքը ցըլլ լէն՝ Աստուծոյ կը յանձնէ զինքը կտարեալ զըլլ ջումավ , ու անանկ կը մեռնի : Մկրտութիւն սրոյ կամ արեան՝ է մարտիրոսութիւն . որ ալ ազէկ կը լէցընէ մկրտութեան ռեզը . վաճ զի է գործ ծայրագոյն սիրոյն Աստուծոյ . ըստ այնմ և Մէծ և քան զայս ռեզ ու ունի , և թէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց ¹ „ :

Ա . Մէկն ալ հարցընէ . Քրիստոս ռեզն մեր երեսուն տարեկան մկրտուեցաւ , մէնք ինչո՞ւ համոր նոր ծնած երեխան կը մկրտենք :

Պատուիանի . Այս բանը որ ընդ հանուր և կեզեցին կընէ . յամենայն ազգս քրիստոնէից , Քրիստո-

ու իջած սովորութիւն է՝ առաքելոց ձեռքովը .
արդ՝ առնեայն քրիստոնեայք նոր ծնած երեխան
կը մկրտեն , ուրիշն Քրիստոս տէրն մեր առանկ
հրանիք է առաքելոց՝ ան ալ մեր ոգաբն համար .
չէ նէ՛ անհամար տղաք և մարդիկ անկնունք կը
մեռնեին . պրակնեան աւելի շատ է՝ երսուն տո-
րին չի հասնողը՝ քան հաւատողը : Իրաւ է որ առջի-
առեն ամանիք նոր հաւատոցի եկողներէն՝ կամաւ կը
սպասէին որ երսուն տարին հասնին , ու մզր-
առեն . ամանք ալ ուխտ կընեին՝ որ առեն զանան
նէ՛ երթան Յորդանուն գետը մկրտունին Յիսուսի
պէս . զուցէ ծածուկ միաք մըն ալ կը մանար առ
բանիս մէջ , որ ամենն մեղքը դործելէն ետե՛ զիւ-
րաւ սրբունն մկրտութեամբ . բայց շատն ալ չի
հասնին անկնունք մեռան . անոր համար պատուի-
րեց եկեղեցին որ որչափ կարելի է նէ , շուտով
մկրտունին : Թող որ հին որինաց մէջ ալ տղաքը
տղակուց կը թլիքառէն , մենծուստ հաւատը ե-
կողները՝ մենծուստ : Կուռնելիս հարիւրապէ-
ար՝ որ իր բոլոր անոնցը մկրտուեցաւ , և այնչափ
աներ որ մէկենիմէկ քրիստոնէ Եղան նէ , ասոնք
ամմէները երեսուն տարեկանն էին . յայտ է թէ ամ
մէն հասակէ կային , մեծն ու պզարիկ : Ուստի յի-
մար են այն աղանգաւորները՝ որ անկնունք կը-
սուին . ինչու որ անկնունք կը որահեն տղաքը ին-
չուան երսուն տարին . կամ շաբահաս ըլլայ կը
մեն . անիսէ շատին շափը առաջաւց կը հասնի , ու
աշաս կը մեռնին :

Հետեամբ

1. Մկրտութիւնը կը սրբէ ամմէն մեղք . թէ սկզբնականը՝ թէ ներգործականը . քանզի է բոլորական մաքրութիւն հոգւոյ , առջի գեղ կենաց . եկեղեցւոյ դուռը , և որդեգրութիւն հօրն Երկնաւորի , որով կը լւանք անգամք Քրիստոսի , և հարսն հոգւոյն սրբոյ սրբարտը շնորհք առնելով . վասն զի՞ ՚ի ծնողաց կը ծնանենք որդիք բարկութեան , առազանենք կը վերածնանենք որդիք փըրկութեան . “ Զի ծնեալն ՚ի մարմնոյ մարմնն է . և ծնեալն ՚ի հոգւոյ հոգի է ” , , ,

2. Մկրտութիւնն Յովհաննու խորհուրդ չեր . խորհրդական արարողութիւնն էր . շնորհը նշան ունէր . ու շնորհքի պատրաստութիւնն էր . բայց շնորհք չեր բերեր . ուստի Յովհաննես Մկրտչն մկրտուածները՝ նորանց մկրտեցան Քրիստոսի մկրտութեամբը ² :

3. Մկրտութիւն ջրոյ իրեք կերպով ալ կրնայ ըլլալ . այսինքն ընկողմամբ . հեզմամբ . ցողմամբ : Ընկողմամբ սովորական է արեւելքան ազգի . հեզմամբ՝ յատուեկ եզաւ արևմանան ազգի . իսկ ցողմամբ՝ ետքի հարկաւորութեան առեն միայն կը լսայ . Եւրոր առեն ցիկայ , կամ առաստ ջուր ց գանուի . միայն թէ այնչափ ջուր գոնեւ պիտի ըլլայ . որ կարենայ ըսուիլ լուսցումն կերպով մը :

1 Յաշ . Դ . 6 :

2 Գաշեաց . Ժ. թ .

4. Խնչպէս ջուրը հարկաւոր է՝ ՚ի նիւթ մկըր-
տութեան , նոյնապէս և ձեւ բանին . ուստի կըսէ Օ-
գոստինոս . « Բայրձ զբանն ՚ի ջրոյ . և զբնչ մնայ ,
» Եթէ ոչ ջուր : Յարեացն բանն ՚ի տարրն . և լի-
» ՚ի խորհուրդ : Աւստի իցէ այդշափ զօրութիւն
» ջրոյ . ՚ի մարմինն մերձենալ , և զօրիսն լուա-
» նալ . բայց Եթէ ներգործութեամբ բանին . ոչ
» զի լոկ ասեմք , այլ զի և հաւասար . քանզի և
» ՚ի բանի անդ այլ է հնչումն անցողական , և այլ
» է զօրութիւնն մնացական ¹ , , , :

5. Մկրտութեան շնորհը հոգին կը լուանայ
ու կը մարրեւ մեղքն . և անանկ կը նորոգէ որ նոր
ծնած կըլլայ ՚ի նոր կեանս . բայց անմեղանչական
ցրել զանմեղը . ինչպէս որ լավերնիս լուացուի
առջի աղասաւթենեն , անկից ետև մարտոր սպա-
հենք նէ , չազասամիր . հասկա թէ անհոգութենով
ազատանիք նէ , յանցանցը մերն է . անկից ետև
խոստավանանիրով պէտք է մարրուիլ : Ասոր համար
կըսէ Օգոստինոս ² . « Մկրտութեամբն ՚ի բիստա-
» սի այս ինչ գործի . զի մարմին մեղացն խափա-
» ՚ի . բայց ոչ այնպէս խափանի , զի մի մեացէ
» ցանկութիւն բնածին , այլ զի մի վնասեցէ .
» Զի թէ զինի մկրտութեան՝ ՚ի ընական չափ հա-
» սակի հասանեն , ունին յայնժամ զայն ընդ . «
» բում ունին պատերազմիլ , և օգնականութեամբ
» անառն յաղթել նմա . Եթէ ոչ ընդունայն իցէ
» տռեալ նոցա զշնորհս (կամ անվաներութեամբ ,

1 ՚ի մասն 2 :

2 ՚ի Գիշան ։ աղակ հուն հուն ։

Հ կամ կորուսանելով զշնօրհս մերտութեան) ։
6. Մեղսութիւնն է կնիք (այսինքն տամզայ) քրիստոնական հոգին լուսավորյլ տպառուել յանուն երրեակ լուսոյն 'ի հոդիս մեր՝ անջնջելը յախաւան. վասն որոյ և անկրկնելին Առափ կը դրէ Օգոստինոս . « Արին մերտէ զայր հերեւ ափկառ, որոյ առեալ իցէ զայր կնիք արրոյ Նորոր . գութեան, զոր առանդ է քրիստոնեականն վար . գաղեառթիւն, մեղք է ամենայն իրոք . իսկ կը կնիքն մերտէ զուզզավորուն անհնարին տպի . բառութիւնն է ։ ։ ։

7. Կաղաք մարմնոյ բնչովես որ պարտական են հոգալ զանունդ մարմնոյ զաւակաց . նոյնովես պետք է հոգան զհոգեսր ծնունդ և զանունդ նացա, այսինքն փոյթ տանիլ մերտէ տալու, և անկից եսն 'ի շնորհս Վասուծոյ մենձնալու : Եսին հօգեոր ուարաք կիյնայ նաև կերահօր ու կերամօր պրան . որ բնչովես հոգեոր ծնուզ եզան իրենց սանին, նմանապես հոգեորապես մնուցիչ ըլլան բնչուան 'ի շաբահասութիւն . Աս է Օգոստինոսին ըստծը² . « ՁԵզ ազգ առնեմ նախքան զամնայն » եթէ կանայք և եթէ արք, որք զարդիս 'ի սուրբ աւազանեն ընկալայք, զի ծանիջիք զանձինս Ե . բաշխաւ որս լեալ առ Վասուծոյ վասն այնոցիկ՝ զորս կերեցիք . վասն որոյ հանապազ խրառա . ցեք զնոսա՝ պահել զմաքրաթիւն, սիրել զար . գարութիւն, պահել զար : Յառաջ քան զա-

1. Ի նորութիւն առ Արմավիճակ :

2. Ի մասն պահի զարիկ :

„ մենային , զհամեղանեակն և զտէրունական ազգօթու՝
„ և դուք ինքնին պինդ կալարռուք , և որոց եղեք
„ վերընկալ ի սուրբ առազանեն , ուսուցեք „ :

ԳԼՈՒԽ Գ

Դեղ ներդործական մեզաց առ հասարակ , որ
է ապաշխարութիւն :

Ա . Թող մեզագրեն որդիք մարդկան իրենց նա-
խահոք և նախամօք , թէ անոնք մեզ դրախտեն
զուրս ձգեցին առ արտօրանաց վայրը . մեզ չի
ծնած մեռուցին հոգւով և մօրթնով . ի՞նչ կը լար .
մեկ ծառի պառազ մը չուաեին՝ համբերելին : Ա-
զեկ ամեն . Ադամին ալ ի՞նչ կըսէ . թող լսեն . Ի-
րաւ որ Ես անիրաւեցայ , առաջ առ Առառած
եարը իմ բոլոր զաւակացս . բայց ստկայն իմ պահ-
ծալի զաւակս որ Է միանգամայն իմ անքու և առ-
տուածս , այսինքն Յիսուս Քրիստոս . Եկաւ աշ-
խարհս նորոգեց , իմ աւրածս շինեց . զմեզուորքս
արդարացոց , և հաշուեցոց զհայր ընդ արտարածո-
կենգանարար սուրբ Հոգին նորէն ծնաւ . ի սուրբ
առազանեն զիմ մեռած զաւկըներս , ու կենգա-
նացոց . անկից եսև իրենք իրենց առանձնական
յանցանքովք որ Է ներդործական մեզքը . վիրենք
նորանց կը մեռցնեն նէ , իս չի մեզագրեն . զի-
րենք մեզագրեն :

Եւ իրաւ որ՝ Ադամ մեկ անդամ մեզանեց նէ .
բոլոր կենացը մեջ հազար տարիի մատ ապաշխա-

լեց . զուն ապամորդի բանի անգամ մեղք ըրած
անիս , մէկ անգամ մը ազեկ ապաշխարած չու-
նիս . անիսէ անոր սիսալանիրը քեզի նրան պիտոր
ըլլար . աւեար որ մեզը Բնէ գեշ բան է եղեր ,
որչափ չարիր կընէ եղեր . Բնչու մեզանչոզին կը
հետեխ . աւեար որ ապաշխարելը Բնէ ազեկ բան
է եղեր , մրչափ բարիր կընէ եղեր . Բնչու ապաչ-
խարացին չես հետեխիր :

Ը . Անի Բնէ բանմ մարդկան ակարութեանը ,
ապիտութեանը , չարութեանը , որ մէյսէկ հիւան
գութիւնն են հոգւ այ . բայց առ ջի երկուքը խղճա-
լու է , այսինքն թեթե ըլլալով ներելի ոզորման
թեան է . բայց ետքինը ծանոր բան է , ուստի
շատ անգամ անարժան կը մնայ ոզորմանթեան ;
Այն անհուն ոզորմանթեան կըսեմ , որ մեր ակա-
րութիւնը և ապիտութիւնը զիտեալով մեր հիւան
գութեանը կերպէ՝ երկրորդ աւազան և գեղ կե-
նաց դրաւ . զապաշխարութիւն . որպէս զի ուզ որ
յիտ կենցանանալոց ՚ի մեռելութենէ մեզացն Ա-
զամայ՝ նորէն կը հիւանց անայ , ապաշխարութեան
գեղը առնել ու առողջանայ . ովք ովք մեռնի ոզիլէ
նէ մահանափ մեզը չարութեան , նոյն գեղը ա-
պաշխարութեան առնել կառարեւալ զզօմամբ և
Համարիս խոստավանութեամբ , նորէն կենցանա-
նայ : Այնչափ որ եօմնէ անգամ չէ , եօմանասու-
նըեօմը անգամ պիլէ ինեկնայ նոյն մեղքով , աւ
զիք ունենայ ոսք ելլազու խորհրդով ապաշխարու-
թեան : Ա՛վ անբաւ մարդասիրութեան Աստան ծայ :

Դ . Ապա թե մեկը առ երախախիրս չի զիտեայ :

ու սահմարժակ տայ զինքը ամսմէն մեղաց . կամ
մէկ ծանր մեղքը իրեն սավորութիւնը ընկէ՝ ու չու-
զենայ ետ կենաց . կամ թէ Աստուծած անկից երես
դարձընելու տեղը՝ ինքը Աստուծմէ երես դարձընէ
և ուժուր տեսպէ առ Աստուծած դառնալ և ապաշ-
խարել . սանքի թէ Աստուծոյ բան մը կընէ կոր .
կամ թէ տաե զյեզն կենաց , և անզեզջ որախ
պազի բոլորութիւն խոստավանանքէն . որով կամ 'ի
յուսահասութիւն ինկնայ , և կամ 'ի յանդանու-
թիւն' թէ բնչութես ըլլայ նէ՝ եսքը սեղամեթ կել
լամ տեի , և կամ արհամարհէ Աստուծոյ պար-
զէն ալ պատիժն ալ , խենթ չէ մի այնպիսին , ար-
ժանի չէ մի կապելու դժոխին բանար : Անմեկ է՝
կըսենք ամսմէրդին մէկ բերան :

Անմեկ է նէ , աչուբնիս բանանիք մեզուոր մող-
բարք . խելուբնիս ժողովնիք . զերեւ ասանեկ խեն-
թեր գեշ չեն մեր մօջը : Հիւանդ են , դիսեն .
բայց գեղ տանել չեն ուզեր . և անոր հանոր ի .
բենց հիւանդ ըլլալն ալ չեն ուզեր իմորար ընկէլ
սուրէ խոստավանքի մէջ . որով իրենց վրայ
կուզայ այն վոյն որ կըսէ Ընարհացին . և Ա ոյ ախ-
տացելունին յախան , որ խոյի և ոչ ընդուածու . . .

Դ . Հիմա բանը ասոնց խոյր հասկցընելն է , որ
իմանան իրենց խելագարութիւնը ու խելարերին
հանձնան իրենց հիւանդութիւնը . ու գեղ տանեն
որ բժշկուին . իմ ըսելիքս իրենց անէ . մէկ բնական
խելազար խենթ մը տեսնար նէ , կը ցաւակցիք ին զՃ
է կըսէք . անքանի մը պէս բան մը նէ եզեր . ձա-
ռու ընկէդ զայ նէ՝ սպարմութիւն ալ կուտար . կամ

Առաջ կը մասմաս որ զեզով մի կրթոյ՝ Տեհան մի
կրթոյ, խելքը դժուխը դայ՝ հանգու զուք մի մեղս
առը՝ աշխարհամի խենթերեն էք, որ ցաւակցելու այ
արքանի չեք. ինչու որ կամասոր է ձեր խելքան
բամեխանը. և անոր համար չեք Եռոպուր որ մեջ
մեր պայ խոզնայ, ու Խար մը ընէ մեզ խելչրցնէ,
զու. Վշիմն մեղք խենթութիւն կըստու բարոյա
պես. և առջի զեզով ան է որ ամենն մարդ իր մե
զաւոր ըլլոցը Խանչնայ. որ անոր կերպէ երթոյ
հայկակը բժշկի մը զի՞րը ցուցնէ խոստվանեցի
մեջ, ու կենաց զեզը առնէ:

Ա. Մէկ մարմառ որ կայր մը առանց նէ, և
խոզնայ, Խամբայ կը ցաւցնէք. մեր հազեռոր կա
րտթիւնը առանցայիք նէ. էն առաջ մեր պայ և
խոզնայիք, ու Խամբայ կառպայիք. Խամբան ալ չ
պիսեաց նէ, առաջնորդ մը կը միամալիք. ու և
զանայիք խմառաւն հազեռոր հայր մը : Բայց Ենչ
ընեմ որ ակամայ չի մեր կարտթիւնը, այլ կա
մասոր, որ առ ոչ երբեք է կեցնէ յառաջութիւնն
կրտն բժիշկը հոգւոց առը վարդապետք, բա
նիւ. Երկնառոր բժշկին, որ ըստց առ Փարփակցին
և Եվթէ կոյցը եիք, ոչ եր ձեր մեզ, բայց որդ ա
ռեք եթէ ակամնէմք, և մեզքն մեր ՚ի մեզ հա
մասեալ էն¹ : Սակից ազբայի բան ցիկոց : Են
առնենեցը թող երթան այս ազ-թըը ընեն զիշէ
ցորեկ: և լոյս առեք մեր աշուց խմաց, զի մի երբեք
նաշեցից ՚ի մաս²:

1. Յ-Հ. թ. 41 :

2. Ս-Հ. ժ. 4 :

Չերկենցը եմ յայտնի . բաները . դուեց հիմա
ուսուցն ի առջ հասկըցը նեղաւ . նախ թէ բանի ցեզ
Ներգործական մեղք եւս . որ մկաններ հարեւոր ցու-
են , և երկրորդ թէ բնչավետ պիտի ըլլոյ առևմբառն
ընդ հանրական գեղոյ , որ և խօսքաւորդն ապացու-
բաւ թէ են :

ՅՈՒՊԻԱՐ. II.

Բացատրութիւն տեսակաց ներգործական մէ-
րոց :

Ա . Մեղքն որ մասնելոյ մարդուս բնութեան
կողմանէ , որ գոյացած է ի հոգւոյ և ի մարմուն .
կեռը պիտի բանեց հացեսր , եւսը մարմանոր :

Հոգւոր մեղք են առջի իրերը գիտաւոր մեղքն
ընէ , որ մարմարամազ կը գործ ունին . ի կա-
մոց , թէ և դորժիք ունենան զմարմինն ալ . այս-
իք Հայարառութիւն , Կամանաք , Բարեկաթիւն , և
ինչ որ առնեց առելը կլինայ :

Մորթառութ մեղք են Եարի իրերը գիտաւոր մեղ-
քերէն , որ մարմար կամ մարմանոր բանի պայու-
կը դորժին ի կամոց , թէ սպան ի ձեռն մոց .
այսինքն Ազահութիւն , Արկամանաթիւն , և Բըզ-
ջախահութիւն . և ինչ որ առնեց առելը կլինայ :

Խոկ Շառաւութիւն , որ ոչ այնշափ զրական բան
է , որշափ բացատրական , հետ հացեսր հետ մար-
մանոր մեղք կը կոյ ըլլու . Բնչավետ որ վորը կի-
մանաս :

Ա. Դարձեալ մեղքն որ մտած ենք մարդուս հո-
գեոր և մարմնաւոր կարողութեանը կողմանէ . ի-
բեք կերպ կրնայ ըլլալ . խորհրդով . բանիւ , և
գործով :

Խորհրդան՝ կը լլան՝ չէ թէ միայն վերի ըսած հո-
գեոր մեղքերը , այլ և ամենայն մարմնաւոր մեղք ,
Երբոր իրաւցընէ կը ցանկանք որառվ . անանկ որ
թէպէտե պիտի շընենք , կամ ցի կարենանք ընել
այն մեղքը . բայց անանկ յօժարութիւն և հաւա-
նութիւն կայ որտին մէջ որ առիթը գտնայինք նէ ,
պիտի ընէինք . օրինակ ըլլայ չար խորհուրդն ցան-
կութեան՝ որ Ք. բիստոսի ըսածին պէս , « Ամ-
նայն որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոց
նման , անդէն շնացաւ ընդ նմա 'ի որտի իւրում » :

Ըսի , « Երբոր իրաւցընէ կը ցանկանք որառվ .
չէ նէ սոսկ մորեն անցնիլը՝ առանց որտին յօժա-
րութեան և կամաց հաւանութեան . բնաւ մեղք
ցի սեպուիր . վասն զի ան առեն մննք չնառ չենք ,
հապա իշտ այսինքն քաշող ենք . ինչպէս շատ ան-
գամ ու սուրբերուն միացը պիլէ ակամաց կուպայ
ցանկութեան մեղքը , որ վարդնելուն պէս՝ վարձք
ունի , պատիժ չունի : Ապա եթէ մեկին մորեն
անցնի շար բան մը յօժարութենով մը , առանց
կատարեւալ հաւանութեան (ինչպէս շատ անդամ
կը լլայ անհոգ մարդկանց) . կը լլայ թեթէ մեղք
մը . քիչ մըն ոլ մաքովը խաղայ , քիչ մը յօժարե-
լու պէս ըլլայ նէ , կը լլայ առելի ծանր մեղք , որ

կըստուի յամեաւ հեշտանիւն : Խոկ եթէ ըլլայ կատարեալ հաւանութեամբ . կըլլայ կատարեալ մեղք խահուչափ :

Զոր օրինակ , զնենք թէ մաքեդ անցեր է որ հարդ մեռնի նէ . քեզի աղեկ կըլլայ որ մերաս կուսես . թէ որ դուն մէկենիմէկ թօթվեցիր կամ խապուլ ցըրիր այն բանը իրրե անարժան մասնութիւն , ըսելով՝ իմ հօրս կեանքը շատ մենծ բարի է ինձի ըստ ինքեան , քան թէ անոր ստակը , բընաւ մեղք մը չիկայ . հապա թէ քիչ մը ուշացած եղար առ մաքի վայ , թէ իրաւ ինձի աղեկ կըլլայ հօրս մահը , բայց կատարեալ հաւանութիւն չտուիր . թէթէ մեղք մը եղած է : Ապա եթէ . Աստուած պահէ , իրաւցնէ ուղեցիր սրատվդ . որ քու մարմնաւոր շահութ համար՝ հարդ քիչ աղբի , կատարեալ հաւանութիւն Եղածի պէս՝ ծանր մեղք գործեցիր խորհրդով : Առ է Քրիստոսի ըստածք . և Զի ՚ի սրտէ Ելանեն խորհուրդը շարք . սպանութիւնք , շնութիւնք . պոռնկութիւնք , գողութիւնք , սուտ վկայութիւնք . հայ հոյութիւնք¹ , , . “ Զի ՚ի նելքուստ ՚ի սրտէ մարդկան խորհուրդը շարութեան Ելանեն . շնութիւնք . պոռնկութիւնք , գողութիւնք . սպանութիւնք . ապահութիւնք . զիջութիւնք . շարութիւնք . նենդութիւնք . զիջութիւնք . շարակնութիւն , հայ հոյութիւն , ամբարտաւանութիւն , անզգամութիւն , , :

Բանիս , այսինքն խոսքով կըլլան այն ամենայն

մեզ, որ խորհրդավ ըլլալէն ևու՞ մարդունքը
նեն կելլան . զոր օրինակ սուսթիւն , սուս պիոյ
ութիւն , երգաւաճ վայրապար կամ սուս , առնուլ
զանունն Աստուծոյ բնդունայն , ուրացութիւն , զոր
սպարառաթիւն , բամբասանիք , նախատինք , հայ
հոյութիւն , յիշոցք . անձեր , ցոփարանութիւն ;
խեղեստակութիւն , ծազրել զբնելըն , չպահել
զնորհուրդ , ընդ վայր հարկանել զուրբ և զարս
զան իրա , և այն : Ըստ , “ խորհրդավ ըլլալէն ե
ան Յ , զերեւ բերնենեն ելամը թէ որ մորեն շանցներ
առաջ , ու չի հաւաներ նէ , զուրս ու չեր ելլոր
և քանիզի ՚ի յաւելուածոյ սրամի խափ բերան ՚Յ :

Գործառ կը լին այն ամենայն մեզք , որ մորեն
անցնելին ենք , ու կամքը հաւանելին ենք , մարմ
նաւոր կարսզութիւնիք զայն բանը ՚ի գործ կը
զնեն՝ զլուխ հանելու համար . թէ և կիսկատար
մեայ դրսի պատճառով մը : Աւսախ մեզք գործոց
են բնէ որ կը լին հինգ զգայրաբանօք մարդոյն .
զոր օրինակ գեշ հայեցուած , չոր անկանցրու
թիւն , որկրամուսթիւն , արրեցութիւն , էւելորդ
համերու եաւել իյնալ . մարդ զարնել , սորանու
թիւն , զուրութիւն յափշտակութիւն , գեշ համ
բայ երթաւ , ընդ շեմ բնութեան մեզքեր , չնու
թիւն , կախարդութիւն , խորդախութիւն , սուս
արի մեջ խարեւութիւն , և այլ ամենայն անոր
ժան և անկարդ գործք չոր մարդ կանց :

Դ. Դարձեալ այս ամենայն մեղք , նոյելով ի
պատճեռու մեզանցական բնութեածն մերոյ իրեք
պատճեռ է կը նան ըլլալ . այսինքն ի տկարութե
նէ , ի աղխառութենէ , ի չարութենէ .

Մէջ աւորս-ին առ կը սուի ընդգծեմ Հօր ա
մենակազի) . այն է , որ մեր տագականեալ բնու
թիւնը իրրե երկիր անիծեալ և վշարեր՝ անգա
դար ինքիրոմ անսպասան բաներ կը բռացընէ . ըստ
այնիմ ու զի միաբ մարդկան հաստատեալ են ի իր
նաման չարի ի մանեկառթենէ իւրու 1,, : Առափ ա
ռանց մեր մանաւալու՝ ինքիրոմ մեզանցական բաներ
մեր միաբը կիյեայ , կամ լուելով և առանձակալով ար
գելած բանը՝ սրաերնիս կուզէ . կամ յանեկարծ
գանուելով բերանենէս անշնորհք խոր մը կելլայ ,
կամ մեր կամքին զեմ բան մը ըլլայ նէ . շուտով
մը սրաերնիս տակնաւգրոյ կը լլայ . ոչ տասկը ոչ
էսքը մանաւալով զինովի ովքս կիրք բարեկառթեան
և ուրիշ որափ շարժմանկըները ուրք կելլան . մեկ
խորպավ լաշչիս եղան ըստածնին մէկ ըլլալով անխու-
հուշ-ծեւլ լուրջնաշ հետ՝ յանեկարծ մեղք մը կը խո
թեն մեզ , որու նիւթը թեթեն բան է նէ , թեթեն
մեղք կը լլայ . ծանար բան է նէ , ծանար մեղք կը լ
լայ . գարձեալ շատառվ մը վրայ գանձք նէ , թեթեն
մեղք կը լլայ . քիչ մը ուշանանք նէ , կը ծանարեայ .
միայն թե բոլորովին չի տիրե մեր վրայ . քանզի
ան առեն տկարութիւնը ի չարութիւն կը վր
խուի :

Առավելութեն խռովելով՝ ակարութեան մեղքերը ա-
նոնք են (թէ թեթև, և թէ ծանալ), որ սեպեա
ըլլոցին կըսենք, իս մեղք մի խօթեր, ու մեղքը ըս-
կըսած չըսկըսած՝ և ա կը քաշուինք, կամ մինք մեղք
դլուխ չարժելով՝ մեկ զիւն մեղանչական բանին
քիչ մը մեյիլ ենք առեր, ու մեկ զիւն՝ մեղայ մե-
ղայ կըսենք։ Ասանեկ ակարութեան մեղքեր շատ
կը մանան ի նիւթ բարեկութեան, հեշտութեան,
և որկրամալութեան։ անանեկ որ եղլու բան մը ը-
նելու պիլէ ըլլանք, մեր ակարութենալ եղասազ
կերպ մը կը խօթենք միջք։ Բռնն հիւանդութիւն
հոգւոյ կըսուի առ ակարութեան մեղքը, որ զե-
զոյ կարառ է. և զեզը ընենք նէ՝ կառողանանք.
առեն առեն նորէն անհանդիսա ընելու ըլլայ նէ
նոյն հիւանդութիւնը, մենք ալ նորանց զեզ առ-
նելու ոչ պիտի խաղնինք, և ոչ անհոգանանք։

Թէ մեղքերն որ շատ անդամ կիյնանք նէ,
հասարակութեն ակարութեան մեղք կըսուին։
ծանար մեղք մըն ալ՝ որ սովորութիւն չէնքըրած,
մեկ երկու առրին անդամ մը պատահի նէ, ակա-
րութեան մեղք կըսուին։ Արտանց կը ցաւինք մեկ
բանի վրայ, ու բաւական ջանք ընելէն ետև՝ սու-
զի նորէն կիյնանք նէ, ակարութեան մեղք կը-
սուին, թէ մենն ըլլայ թէ պզափիկ։

Խնդրէ յամնասկարողէն Աստանեոյ, որ առյ
քեզ կարողութիւն և զօրութիւն յաղթել մարմ-
նոյ, աշխարհի և սատանայի, չէ նէ կիյնաս քու
ակարութեամբ։ “ Տուր զօրութիւն ծառայի
քոյ, կեցո զորդի աղախնոյ քոյ, և արա առ իս

նշան բարութեան¹ , , , «Տուր զօրութիւն հոգւոյտ
կամաց՝ հնազանդել զիտմա մարմնոյս² , , ,

Տէիւռաննեան հեղու՝ (որ կըսուի ընդդեմ Արդւոյն
Խոտուծ ոյ, որ է խմասառ թիւն Հորին երկնաւորի),
ան է՝ որ ազել մը չէինք գիտեր այն բանին մեզք
ըլլալը, որ պարտըկան էինք գիտնալ, զերե մեր
գիտնալու բանը ցրցայ նէ, բնաւ մեզք չըլլար.
զոր որինակ մեկը ուրբաթ օրը միտքը վասն չըլլա-
լով միտ ուտե նէ, ուսեւլովք մեզք չկործէր, հա-
պա իւելքը վրան չունենալուն՝ որ կարենար գիտ-
նալ թէ օրը ուրբաթ է. ուր աշխարհին ամ-
մէն բանը միտքը կը պահէ տէ՝ Խոտուծոյ ուր իր
պարտքը ընելու իւելք չիտար: Մէկն ալ հաւատքի
վրայ բան մը իւսուելու տակն, կամ չդիտցածը
թէ վելքէի իսոսի, կամ յայտնի բանը չդիտնայ ու
չկարենայ պատասխան տալ, ազիտութեան մեզք
կը գործէ, ծանր կամ թեթէ բանին կեօրէ: Տը-
ղոյ մը չարը բարին կը ճանչնայ, բայց իրեն կամ-
քին յարմար եզած բանին ազեկաւթիւնը գեշու-
թիւնը բարտկ կընարէ: իր ուզածին գէմ բան ըլ-
լոյ նէ, անշափ բարտկ իւելք չի թափեր, ազեկը
գէշի տեղ կը դնէ, գէշը ազեկի տեղ. ասով ազի-
տութեան կամ անդիտութեան մեզք կը գործէ:
մենք կամ վորք՝ բանին կեօրէ. հապա թէ իրեն
ըստն՝ թէ առ չար է, մեզք է, ու համկրնալ մափէ
ցընէնէ, չարութեան մեզք կըլլայ:

Կուսագաշաք կամ անդիտութեան մեզք չիկրնար ազէտ

¹ Ա-Ն. 26. 16 :

² Ը-Դ-Վ-Ն-:

ըլլալ Հմայրամին Վասուծոյ, առափ միշտ չարութիւնն կողյ սիրալ, որ յի թագուք Խանջնազ և պաշտել զՎատուած - առափ կըսէ Դաւիթիմ մարգարե. « Այսաց անզգամին ի՛ սրափ իւրում, թէ ոչ զոյ Արտուած ¹ չ, անս որ չըսնէր, առաջ ի՛ Երի, զերե մարտից կամ խելքովը ուզենայ նե՛ կը դահոյ, բայց, սրտովը չուզեր՝ որ ըստոյ, որ զինքը միզամ ժէ :

Աւրիշ անհաւասաներուած մեջ, Հրեից և հերեափ, կոսոց մեջ երկու կերպն ուշ կայ : Կան որ թագածը ազիսութեան մեզքով կուբցած են . կան ուշ որ կը Խանջնան, բայց չարութեամբ չեն դասնար, պատճառ աւնենալով հաւարառութիւնը, ործ աթ, սիրութիւնը, փառատիրութիւնը, մարմասիրութիւնը : Եւ որչափ է նե՛ զիսութեան և ազիսութեան ասքրերութիւնը, անուր կերպէ է և պատճաց զանազանութիւնը . բայտ այնում, « Ծառույ » որ զիսիցէ զկամու անուած իւրոյ, և ոչ պատճառաւ, ցէ ըստ կամաց նորու, արրցէ զան բազում. և որ ոչն զիսիցէ, և արժանի զանի ինչ զործիցէ, արցէ զան սուկու : Վաննայնի՛ որում չառ տուաւ, չառ խնդրեցի՛ ի նմանէ, և որում բազում առան զեցու, առանել ևս պահանջեցի՛ ի նմանէ : ²

Խակ շուրանին մեշտ, (որ կըսուի ընդ զեմ Հայ, այն սրբոյ՝ որ է ազրիւր բարութեան), այն է որ ակարութեան և ազիսութեան սեպես մը չու.

1. Ա-Ղ-Հ. Ժ-Բ :

2. Դ-Հ-Ն. Ժ-Բ. 47, 48 :

նի . Հասպան իր կոմիտը կառապելու համար՝ Վասուն
ծոյ կամբը կը կոստը . զիսէ թէ ըրածը շար է ;
մեղք է . թոզ ցիզիանայ թէ արշափ է այն մեղքին
մինչութիւնը . զիսէ թէ Վասունոյ դէմ է ; թէ
և կամբը Վասունոյ գեմ ըլլայ աեխ շըներ . զոր ո
րինակ Ազամի և Երայ զիսէին Վասունոյ հրա-
մանը . որ պիտի շուտուի այն ծառակն . և մէկ ար-
կարութիւնն մըն ալ շունելին . ըրած անհնազան
զութիւննին՝ կառապելու շարութիւնն էր . և ա-
ռելի չար . զիրենիք արդարացրելիք . ու շուտով մը
մեղքայ ցըսելը . Չար էր և նախանձն Կայունի ընդ-
գեմ բարի եղբար խորյ Արելի . և առելի չար . չի
զիտակին գալը իր ըրած արունը . և ծայրազ ոյն
չար . եռքի յաւառհասութիւնը . Չարութիւնն էր
և Դառնթին կրկին մեղքը . շնութեան և մարդա-
սպանութեան . յայտնի են և այլ ծանր ծանր մեղք
մարդկան . որ ի շարութիւնն էրլան . բայց ծոյ-
րագոյն շարութիւնն էր հրեշտակաց մեղքը . որ հը-
պարան թէ ամբ սպանաց եղան . մինչ շարու-
թիւնն էր և գորոց և պարբեցոց ըրածը . որ
Գրիստոսի հրաշքները . սպանացի կուտային .
և արծ ալ զանմեղ գառն Վասունոյ իրեն մեղք-
սպարանանել տուին . անենցմել շատ վեր էր Յու-
դային շարութիւնը , որ իր երկնաւոր վարդա-
սպան վաճառեց անոնց մեռլը իրեւ Հասպանկ
մարդ մը :

Չերկնցընեմ . շարութիւնն մեղքը ինչպէս Յու-
դային պայց ազէկ կիմացուի . ակարութիւնն մեղքն
ալ Պետրոսի վեայ յայտնի կիմացուի , և ազիսու-

թեան մեղքն ալ Պօղոսի պրայ : Ուստի շարականը
կըսէ Յուդային ու իրեն համախոնից համար .
“ Զաքէն խորհեցան ՚ի շարութեան՝ Աստուած
յաւիտէնից : Խոկ կորստեան որդին Յուդաս ՚ի
համբոյր մերձեալ նենդութեամբ՝ նշանակ և ա-
ռիթ մահու անմահից ,,: Բայց Պետրոսի հա-
մար կըսէ . և Այսոր զմիւմն հաւատայ շարժեալ
փորձողին խորեւթեան մարտ , առ ՚ի քէն թա-
ղացուցեալ , զմարդկային տկարութիւնս յանդի-
մանելով , և առ յոյս գարձի մեզաւորաց ,,: և
այլն : Եւ Պօղոս իրեն համար կըսէ . և Որ յա-
ռաջադոյն հայհոյիցն էի և հալածից և թշնամա-
նիչ . այլ գախ ոզորմաւթիւն . զի զայն յանդիտու-
թեան և յանհաւանութեան գործէի ։ ,,: Խոկ Դա-
սիթ իրեն տկարութեան և ագիտութեան մեղքը
տասնկ կը խոստովանի . և Զմեզս մանկութեան ի-
մայ և զանդիտութեան խմայ մի յիշեր ։ ,,: Բայց
շարութեան մեղքը տասնկ կուլոյ . և Կիեզ միայն
մեղայ տէր . և զար առաջի քո արարի ։ ,:

Ե . Խնչուան հիմա ըստածնիս՝ առնչուած էաւ մեղք
կը կուլուին . այսինքն կանոնէ դուրս բան մը՝ որ
կընկնիք Աստուածոյ կամացը գեմ : Հապա շտա բա-
րի բաներ ալ կան , որ Աստուածոյ կամքը կատա-
րելու համար պարարկան էինք ընկլու ու չենք ը-
րեր , ուստի շնչուածնեան մեղք կըսուի . ինչպէս
Աստուածոյ տուած շնորհքը ըրանեցրել քանիքա-
բաթարոյց ծառայի պէս . ներսի աղջարարու-

1 Ա . Տիւ . Ա . 13 :

2 Առաջ . ԿԴ . 7 :

3 Առաջ . Ա . 6 :

թիւնը կամ Հոգւոյն սրբոյ տուն տուած բարի
խորհուրդները չբանեցընել . պարտքերնիս եղած
աղօթքը և պատորազը՝ պարապ բանի համար մէկ-
դի ձգել . ափերնեւ եկած աղէկութիւնը և ոգ-
նութիւնը ցընել մեր եղբօրը և այլն :

Ասոնցմավ , և առահա ինչ որ եուցը ՚ի մասնաւորի
պիտի խօսինք , կիմանաս մեզաց պէսսպիսութիւնը .
և անով ալ կիմանաս , թէ ի՞նչպէս զցջալ և ապաշ-
խարել պէտք է ամուն մէկին համար . բայց ես ա-
ռելի պայծառ կուզեմ հասկըցընել քեզի ապաշ-
խարութիւնը . վասն զի կը տեսնամ որ մեզք դոր-
ծելը ասամանայի չափ դիտես . իսկ ապաշխարելը
դեռ մարդու պէս չես դիտեր :

ՅՈՒՈՒԱԾ Բ .

Եղանակ ձմարիս ապաշխարութեան :

Ա . Ապաշխարելն է աղ աշեցէն , կամ աղ
աշեցէն , որ է լալով գուրս ձգել . այսինքն պակ-
սութիւն մը ընելն է այլը փիւշման ըլլալ . ինելարե-
րիլ . ցաւիլ ըրածին վրաց անանկ որ մէյմ'ալ այն
բանը ցընէ , հապա ձառքէն եկածին չափ իրմէն
հեռացընել . ու ջանալ այն բանին խարշութիւնը ը-
նել . Ասուծոյ ողորմութիւն է՝ որ մարդիկ ա-
ռանկ ապաշխարեն նէ Շշմարիս սրանց , ու ա-
ռաջագրեն մէյմ'ալ ցընելու ան մեզքը նէ . Աս-
տուած ալ խապուլ կընեմ կըսէ կոր անոնց ապաշ-
խարութիւնը . և անանկ կը հաշտուիմ , տակի բլ-

նաև ինծի հետ թշնամի չեն եղած . “ Ասմեսյան
մեղք իւր՝ զոր մեզաւ , մի լիշեսցի ¹ , : Պատոփի
արժանինի եղածը՝ ապաշխարութենով արբայր
թեան որդի կընէ Աստուած , և աս կերպով անհա
մար մեզաւորք տուրք են Եղեր , ատկից մենծ բա՛
կայ մի : Բանից ան է՝ որ ճշմարտատիւ ապաշխա
րենք : սուկ քերենով ցըլոյ Բշան , հապա գործքով
ետ կենանք ’ի մեղաց . միայն աւերք ցըլոյ ապաշ
խարութեան ծառին վրայ . պատուղ ալ երենայ
ըստ արձնի . “ Արարեւ ոյսու հետեւ պատուղ արժա
նի ապաշխարութեան ² , : Ի՞նչպէս կըլլոյ ըստ
նէ , աղեկ անկան գիր :

Դուն մեկ ծառայ մը ունենաս՝ որ մենք յանցանց
մը ըրած ըլլոյ . զոր որինակ անեն ծանր բան և
գողցեր կամ ընտանեացդ ըստին է անցեր . կամ
քու երեսիդ քիքելով , ծանր նախատինք է ոք
ւեր , կամ չարախառութիւն ընելով . քու անունք
է աւրեր , կամ Էտէկդ է ընկած , որ քեզ ապան
նէ՝ կամ սպաննել ասյ . ’ի հարկէ ասունկ ծա
ռան անեւ կը վարձնանս . Երեսէ կը ձգես . պէտք ըլ
լայ նէ՝ համան ալ կուզաս . Հիմա ըսենք թէ աս
աներես ծառան դոյ ոսբդ իշնայ . մեղայ դոչէ .
միջնօրդ ալ բանէ չէ թէ միայն բարե կամենըք .
Հապա քու մեկ հատիկ սիրական որդիդ , դուն ինչ
կըսես , ինչ կընես . ’ի հարկէ կը նայիս . արգեց
ծառայիդ Բշան սրտանց է թէ երեսանց . և անոր
կեզրէ կամ կընդ անիս կամ շես ընդունիր : Աս-

1 Եշմէ . 1.7 . 16 .

2 Արտէ . 4 . 8 :

իից շատեւ քու ապաշխարութիւնդ ալ, արդեւը
ընդունելի՞ է Աստվածոյ, թէ չէ :

Մեզայ գուշեց Երար Զարմեան, Սաւուզ Կի-
ռական, Անտիոքոս թագաւոր Սելևիացւոց, և Յու-
զա Խակարինվացի, բայց սրտանց չըլլալով, հա-
պատ սոսկ երեսանց, ողօրմութեան արժանի չե-
ղան : Մեզայ գուշեց Դասիթ, Գետրոս, Պողոս,
մարտառը, Մագդաղենացին, և այն - չե թէ
երեսանց, հապատ սրտանց . անոր համար ոզոր-
մութեան արժանի եղան : Ուրեմն բոլոր բանը
հոս է, որ գիտնաս թէ Երր կըլլայ երեսանց ա-
պաշխարելը, և Երր կըլլայ սրտանց ապաշխարել :

8. Ամեն մարդ՝ որ խոստովանիլ ու ապաշխա-
րել կուզէ նէ, զիաւէ որ հինդ բան պէտք է ա-
պաշխարութեան հարկաւոր՝ պղափկուց պէտի
քրիստոնէականէն սորված, այսինքն քննութիւնն
զոջումն, առաջադրութիւնն, խոստովանութիւնն,
և ապաշխարանաց վճարումն : Եւ ամեննորը աս
բաներս կընեն, ամենա տասին մէկը չե, հարուրին
մէկը կըլլայ չելլար՝ որ պտուղը տեսնայ իր ապաշ-
խարութեանը, բոլորումն եա կենալով իր մեղ-
քէն . ինչու համար, վասն զի սրտանց չըներ,
հապատ երեսանց :

Երեսանց կըսեմ նէ, կեզծաւորութեան հա-
մարմի հասկընար, կամ երեսապաշտութեանով դըր-
ոււանց ուրիշները խարեւու համար, (ասիկակ
ուրիշ ծանար զարհուրելի մեղք կըլլայ) . հապա-
կուզէմ ըսել թէ ինքը զինքը միայն կը խարէ .
դրոի կեղաները կուտէ առ բաներուս, ներս ե-

զած պառազր համակա ցըներ . ջրին երեսը կը լուզայ , խորուշներ չե մանար . ստվարութիւնը ըրածի պէս կը խոստավանի , չառ չառ՝ իր սիրար խոզք մրասանըր հանգչի աւի , չէ թէ զԱստաւած հանգ չեցընելու համար . ՄԵղքը բերնեն դուրս կը թափթթվէ , որուն դուրս չի թափեր , չի կը պղնցներ , չի վարեւեր , չի դանիր . բերնով Աստա ծոյ հետ բարեկամութիւնը ընել կուզէ , որով մեղքին հետ հին բարեկամութիւնը կը պահէ ; Վազացոյցը ան է , որ խոստավանելին հազրոգուելն եւսէ՝ պահեկէ մը՝ չառ չառ որ մը կանցնի չանց նիր , կենէ իր առջի սրամին չարութիւնը պահէ . Նոյն հին խույնը կենգանի են . առաջինին պէս քիւթիւնը անզը , առելութիւնը , բամբասանըր . բարեկութիւնը , կամսպաշտութիւնը , ազահութիւնը , պղծութիւնը . մեկ խօսքով ամենն պակ առնենք առջինն առելի է , պակաս չէ : Վասնէ չէ մի մարդ կանց սովորութիւնը . ան աւրեմ , երեսանց պիտի ըստնոր առանկ ապաշխարութիւնը . թէ սրան :

Դիտեմ որ հիմա առ բանիս կարդացողը՝ ով որ ըլլոյ , պիտի ըսէ . իրու է , առանկ կը առանամ կոր՝ թէ ուրիշի վրայ : թէ իմ վրաս . ուրիշը ինչ ընեմ , ևս ինձի նայիմ . անանկ է նէ , ազեկ մը վետեմ՝ թէ լնչառ կը լոյ որսանց ապաշխարութիւնը . բելը . մշյեր խոլու է եղեր ինչուան հիմա ըրած ապաշխարութիւնը , սըռչայ է եղեր , ունան ինչ պէս կը լոյ ճշմարիս և անխարդախ ապաշխարութիւն . վասն Աստածոյ ինձի սորվեցնող մը գըտ նոյի :

